Տարեկան հաշվետվություն

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի

2003թ. գիտահետազոտական և գիտակազմակերպչական աշխատանքների
հիմնական արդյունքների մասին

1. Հաշվետու տարում կենտրոնում պետական բյուջեից ֆինանսավորվել են 5 գիտական թեմաներ: Սրանց կատարման ուղղությամբ 2003թ. ձեռք են բերվել հետևյալ արդյունքները.

   ա. 2003թ. կենտրոնում իրականացվել են տարբեր բնույթի դաշտային հետազոտական աշխատանքներ՝ ազգագրական գիտարշավներ Աշոցքի, Անիի, Արթիկի, Ախուրյանի տարածքներում, Գյումրի, Արթիկ և Մարալիկ քաղաքներում (ղեկ., ղեկ.՝ Ս. Հայրապետյան, Կ.Սահակյան, Կ. Բազեյան), հավաքվել և մշակվում է բանահյուսական մեծաքանակ նյութ (ղեկ., ղեկ., Ս. Պետրոսյան, Կ. Սահակյան), Հայկաձորի տարածքում շարունակվել են նորահայտ հնագիտական հուշարձանի պեղումները, կատարվել է դրանց չափագրումը ու քարտեզագրումը (ղեկ.՝ Լ. Եգանյան):

   բ. «Տնտեսական զբաղմունքներն ու տնտեսության յուրացնող ձևերը Շիրակում XIX-XXդդ» թեմայի (ղեկ.՝ պ. գ. թ. Կ. Բազեյան) կատարման երկրորդ տարում հիմնականում ավարտվել է դաշտային ազգագրական նյութերի հավաքումը ու քարտագրումը, անցկացվել են երկու ազգագրական գիտարշավ Արթիկի և Անիի տարածաշրջանների գյուղական բնակավայրերում: Կատարվել է մարզի տարածքում մի շարք օժանդակ տնտեսական զբաղմունքների (մեղվաբուծություն, ձկնորսություն, թռչնաբուծություն և այլն) վիճակագրական վերլուծություն: Թեմայի գծով հաշվետու տարում հրատարակվել են 3 գիտական հոդվածներ և 5 զեկուցումների հիմնադրույթներ, պատրաստվել է պաշտպանության «Հայոց երկաթագործական արհեստները IX-XX դդ.» գիտական ատենախոսությունը:

   գ. «Ախուրյանի ավազանը մ. թ. ա. 1-ին հազարամյակում (բնակչության էթնիկական կազմը, առասպելաբանական պատկերացումները և պաշտամունքը)» թեմայի (ղեկ.՝ կենտրոնի ավագ գիտաշխատող, պ. գ. դ. Ս. Պետրոսյան) ուսումնասիրման երկրորդ տարում շարունակվել է Ախուրյանի ավազանի հնագույն և հին բնակչության էթնիկական կազմի ցեղային պատկանելության, էթնիկական ընդհանրությունների բացահայտման գործընթացը, ինչպես նաև մի շարք վերոհիշյալ ցեղային միավորների, ցեղանունների ստուգաբանության նախկինում սկսած աշխատանքները: Կատարող խումբի կողմից առաջ է քաշվել և հիմնավորվել է ուշհնդեվրոպական հասարակության եռադասյա կառուցվածքի վերաբերյալ տեսակետ: 2002թ. թեմայի գծով խումբը հրատարակել են 5 գիտական հոդվածներ և զեկուցումների 3 հիմնադրույթներ:

   դ. «Շիրակի արդի բանահյուսության ուսումնասիրումը ազգահոգեբանական հայեցակարգով» թեմայի (ղեկ.՝ կենտրոնի ավ. գիտաշխատող հ. գ. թ. Կ. Սահակյան) գծով երկրորդ տարում շարունակվել է ազգագրական և բանահյուսական նյութերի գրառումը, և ձայնագրումը, կատարվել է շուրջ 50 նոր գրառված առածների և ասացվածքների դասակարգում ժանրային և այբենական հաջորդականությամբ: Անցկացվել են երկու գիտարշավներ Աշոցքի տարածաշրջանում: Ներկայումս ընթանում է հավաքված նյութի (ժողովրդական խաղիկներ, ընտանեկան ծիսական երգեր և այլն) մշակում և վերլուծություն: Շարունակվել է բանասացների անվանական, սեռատարիքային և աշխարհագրական անձնագրերի կազմումը: 2003թ. թեմայի գծով խումբը տպագրել են 4 գիտական հոդվածներ և 2 զեկուցումների հիմնադրույթներ:

ե «Անիի նյութական մշակույթը (ըստ նորահայտ հուշարձանի հնագիտական տվյալների) թեմայի (ղեկ.՝ պ. գ. թ. Լ. Եգանյան) երկրորդ տարում սահմանամերձ գոտում շարունակվել են հնագիտական պեղումներ Հայկաձորում՝ պարզելու համար հնավայրի ժամանակագրական և շերտագրական իրավիճակը: Հայտնաբերվել և հետախուզվել են մեծ բնակավայր, դամբարանադաշտ և բազմաթիվ քարանձավներ: Կատարվում է հայտնաբերված հարուստ նյութի ինտենսիվ ուսումնասիրություն, գտածո նյութերի նախնական թվագրում, կամերալ մշակում: Խումբը սերտորեն համագործակցում է ՀՀ Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության և թանգարանների հետ: Հաշվետու տարում խումբը հրատարակել է 4 գիտական հոդվածներ, պատրաստել 5 զեկուցումների հիմնադրույթներ և տպագրել է «Անիի նորահայտ հնագիտական հուշարձան» (40 էջ) կատալոգը:

զ. «Շիրակի արդի ժողովրդական երգարվեստի ժանրային տաղաչափական և երաժշտախոսքային առանձնահատկությունները» թեմայի (ղեկ.՝ բ. գ. թ. Ս. Հայրապետյան) ուսումնասիրման երկրորդ տարում ավարտվել է Շիրակի ժողովրդական երաժշտության հրատարակված նմուշների և ձայնագրված բնագրերի համահավաք մատենագիտության կազմումը, անցկացվել են երկու բանահավաքչական արշավներ Գյումրիում և Աշոցքի տարածաշրջաններում: Ձայնագրվել և նոտագրվել են ժողովրդական երաժշտական ստեղծագործության 2 տասնյակ նոր նմուշներ: Շարունակվել է երգասացների անձնագրավորում: Կազմվել է ժամանակակից Գյումրում նվագարանագործ վարպետների ամբողջական անվանացանկը: Թեմայի ուղղությամբ հրատարակվել են 5 գիտական հոդվածներ և 4 զեկուցումների հիմնադրույթներ:

2. --

3. ՇՀՀ կենտրոնում 2003թ. հրատարակվել է «Գիտական աշխատություններ» ժողովածուի V հատորը (ԳԱԱ «Գիտություն» հրատարկչություն, 14 հրատ. մամուլ ծավալով), պատարաստվել է տպագրության նաև ժողովածուի VI հատորը (12 հրատ. մամուլ ծավալով), հանրապետական գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթների ժողովածու (3.5 հրատ. մամուլ ծավալով):

4. –

5. –

ա) –

բ) –

գ) –

դ) –

6. –

Աղյուսակ 1-

Աղյուսակ 2 2003թ. ԿԵՆՏՐՈՆԻ ԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

Գիտական հիմնարկ	Պատբյուջեից ֆինանսավորվող թեմաների թիվը		Այլ աղբյուրներից ֆինանսավորվող թեմաների թիվը		
	կատարվել է	ավարտվել է	գրանտներ	տնտ. պայմանագրեր	այլ աղբյուրներ
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն (ԳԱԱ ՀԱԻ մասնաճյուղ)	5	--------	--------	-------	------

Աղյուսակ 3. –

Աղյուսակ 4. ԿԵՆՏՐՈՆՈՒՄ 2003թ. ԱՆՑԿԱՑՎԱԾ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ-ՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հ.Հ.	Միջոցառումներ	Վայրը և ժամկետը	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում՝ արտ.երկրներից
1.	Հանրապետական գիտաժողով նվիրված Գյումրու պատմությանը, ազգագրությանը և արհեստներին:	20-21 սեպտեմբեր, Գյումրի	56	4
2.	Հանրապետական գիտաժողով նվիրված ԳԱԱ հիմնադրման 60- ամյակին:	25-26 հոկտեմբեր, Գյումրի	46	---
3.	Գիտաժողով «Անիի նորահայտ հնագիտական հուշարձանի 2003թ. պեղումները» թեմայով:	25 նոյեմբերի Գյումրի	18	---

Աղյուսակ 5 –

Աղյուսակ 6 –

Աղյուսակ 7 –

Աղյուսակ 8. ԿԵՆՏՐՈՆԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՆԱԿԸ

N	Գիտ. հիմնարկը	Մենագրություն կամ ժողովածու		Ուս. ձեռնարկներ և դասագրքեր		Հոդվածներ կամ զեկ. հիմնադրույթներ	
		Հանր.	Արտ.	Հանր.	Արտ.	Հանր.	Արտ.
	ՇՀՀ կենտրոն	3	-	-	-	36	3

Աղյուսակ 9. ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ

Հիմնարկություն	Ասպիրանտների քանակը (այդ թվում կանայք) առ 1.01.2003 թ.		Հաշվետու տարում ասպի-րանտուրա են ընդունվել (այդ թվում կանայք)	
	ա/կ.	ա/չկ.	ա/կ.	ա/չկ.
ՇՀՀ կենտրոն	1	5/2	- -	--

Աղյուսակ 10 ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

N	Հիմնարկություն	Աշխատող-ների ընդհա-նուր թիվը (այդ թվում կանայք)	Գիտական աշխատողնե-րի ընդհանուր թիվը (այդ թվում կանայք)	ԳԱԱ ակադե-միկոսներ (այդ թվում կանայք)	Գիտության դոկտորներ (այդ թվում կանայք)	Գիտության թեկնածուներ (այդ թվում կանայք)
1	ՇՀՀ կենտրոն	20/12	15/8	- -	1	5/3

ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝ Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ